Միջեկեղեցական

ԳԻՏԱԺՈՂՈՎ ԿԻՊՐՈՍՈՒՄ

Մայիսի 8-12-ը Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցու Կոստանցիայի Միտրոպոլիտությունը Վասիլիոս արքեպիսկոպոսի նախաձեռնությամբ կազմակերպել էր Ս. Եպիփան Կիպրացուն նվիրված գիտաժողով, որին մասնակցեցին Ս. Եպիփանի կյանքն ու մատենագրական ժառանգությունը ուսումնասիրող մասնագետներ տարբեր Ուղղափառ Եկեղեցիներից և քրիստոնեական հարանվանություններից:

Գիտաժողովին Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Գարեգին Ա» Աստվածաբանական հայագիտական կենտրոնի փոխտնօրեն Հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Պարսամյանը, որը ներկաներին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու բարեմաղթանքները: Հայր Սուրբը նաև հանդես եկավ բանախոսությամբ՝ «Կոստանցիայի եպիսկոպոս Ս. Եպիփան Կիպրացու կյանքը և գրական ժառանգությունը հայ մատենագրության մեջ» թեմայով:

ԿԼՈՐ ՍԵՂԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎ ՄԱԿԵԴՈՆԻԱՅՈՒՄ

Մայիսի 14-17-ը Մակեդոնիայի Օհրիդ քաղաքում տեղի ունեցավ ԵՀԽ Եվրոպական էկումենիկ Կլոր սեղանների ժողովը:

Ժողովին մասնակցում էին Եվրոպական շուրջ քսան երկրների Կլոր սեղանները ներկայացնող երեսունհինգ մասնակիցներ: Ժողովին զեկույցով հանդես եկավ Հայաստանյան Կլոր սեղանի գործադիր տնօրեն Կարեն Նազարյանը:

Քառօրյա հավաքի ընթացքին քննարկվեցին Եվրոպական էկումենիկ Կլոր սեղանների կողմից իրականացվող սոցիալական, դիակոնիկ և զարգացման ծրագրերը, լսվեցին զեկուցումներ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թրաֆիկինգի, խաղաղության ու հաշտեցման ոլորտներում Եվրոպական Եկեղեցիների և Կլոր սեղանների տարած աշխատանքի մասին:

Հաջորդ ժողովը որոշվեց անցկացնել 2009 թվականի հոկտեմբերին Հայաստանում: